

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ ՌՈՊԷՐ ՀԱՏՏԷՃԵԱՆԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԵՐՈՒՄ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՂՈՑԵԱՆ

Խմբագիր եւ արձակագիր Ռոպէր Հատտէճեանը (ծն. 1926) վաղուց ճանաչուած ու սիրուած անուն է ոչ միայն Ստամբուլում, այլեւ Սփիւռքի բոլոր գաղթօջախներում, աւելի ուշ՝ նաեւ Հայաստանում: Նա առանձնաւորում է գրական-ստեղծագործական հայեացքի միասնական ներուժով, իմացական եւ հրապարագրական երկու ակունքները գեղարուեստական մէկ հունում վերակառուցելու շնորհով:

Անմիջապէս ընդգծենք, որ նրա գրականութիւնը գալիս է իմացական-հոգեբանական քննական շերտերից: Ստեղծագործական նիւթերի յորձանոտում առանձին եզրագծեր են կազմում մարդ-ներաշխարհ, մարդ-համայնք, մարդ-մշակոյթ առանցքային քննական եղանակները, որոնք փոխկապակցուած են եւ թափանցիկ:

1960ականների երկրորդ կէսից ի վեր Ստամբուլի Մարմարա օրաթերթը Հատտէճեանի խմբագրապետութեամբ դարձել է սիրուած ամբիոն, որի շուրջ տարիների ընթացքին համախմբուել են կարող ուժեր, նաեւ նրանք, ովքեր ժամանակի մէջ արտագաղթեցին ծննդավայրից՝ Վարուժան Աճէմեան (1917-2006), Խաչիկ Ամիրեան (1915-1998), Մկրտիչ Հաճեան (1915-1985), Արսէն Ճանեան (ծն. 1938) եւ շատ ուրիշներ, բայց պահեցին մայր կապը հենց թերթի շնորհիւ:

Յիրաւի, օրաթերթը դարձաւ գրական շարժման կազմակերպիչ: Այստեղից տարածուեց Զահրատի (1924-2007), Զարեհ Խրախունու (ծն. 1926), Իգնա Սարրասյանի (ծն. 1944), Վարդ Շիկահերի (ծն. 1926) բանաստեղծական բարձր ճանաչողութիւնը: Այստեղ իրենց գրական փորձառութիւնն ապրեցին արձակի ներկայացուցիչներ՝ Վարդան Կոմիկեանը (1915-1998), Երուսնդ Կոպէլեանը (1923-2010) եւ, ի հա՛րկէ, Զաւէն Պիպէոեանը (1921-1984):

Իր ինքնութիւնը Մարմարայի էջերում հաստատեց եւ Հատտէճեանը, որը կազմակերպեց համայնքի գրական շուկայ: Երկրորդ աշխարհամարտի աւարտից յետոյ՝ Մարմարա օրաթերթը սանուց միութիւնների հետ միաժամանակ նոր շնչառութիւն եւ, աւելին՝ շարժման յատկանիշներ հաղորդեց գրական ընթացքներին՝ Սան ամսաթերթի ձեւաւորումից մինչեւ Մարմարայի գրական հինգշաբթիները: Հատտէճեանի շնորհիւ ստամբուլահայ գրականութիւնը Սփիւռքի տարածքի վրայ առաջօր պահպանում է ընդգծուած առաջնութիւն:

Հատտէճեանին թերթում յաջողուեց թուրքական քաղաքական զարգացումների ճշմարիտ պատուհան բանալ հայութեան եւ հայրենիքի առջեւ, ո-

րոնք պարզում էին օրուայ իշխանութիւնների դիրքորոշումները, պատճառականութիւնը, հնարաւոր լուսարանումները: Այս ամէնն օգնում էր խորհրդային եւ նորանկախ Հայաստանի քաղաքական ուժերին ճկուն եւ արագ կողմնորոշումների յանգելու, հետեւելու օրընթաց իրադարձութիւններին:

Ինչ վերաբերում է գրական ճանաչողութեան հարցերին, ուշադիր աչքը կարող է որսալ Հատտէճեանի մէկ ուրիշ յատկութիւնը: Նա առաջիններից էր, որոնք ստամբուլահայի միջից հանեցին վախի բարդոյթները, համայնքին հաղորդեցին նիւթի մեկնութեան յարաբերական ազատութիւն: Հատտէճեանի ստեղծագործական ազատութիւնը, ազգային մտածողութեան շիտակ հանդերձները ձեռք էին բերուել գրական առաջին իսկ քայլերից: Եւ չենք դեռ 1977ին Հայաստանի մասին նրա հրատարակած տպաւորութիւնների գիրքը՝ *Օրագրիս Տասնըհինգ էջերը*, ուր նա ընթերցողին ուղղորդում է դէպի իրական երկրի իրական արժէքների առթած հպարտութիւնը: «Հոս կը վերջանան օրագիրիս տասնըհինգ էջերը: ...Անոնցմէ բան մը կայ որ կը շարունակուի մտքիս մէջ, գոյներով եւ ծայներով: ...Բայց որքան որ ալ ստուերի մէջ մնամ, ես անոնց մէջէն միշտ պիտի տեսնեմ այն տասնըհինգ արեւները որոնք ծագեցան տարբեր հորիզոնի մը ետեւէն...»¹:

Եիչենք նաեւ 1988ի ազգային խանդավառ շարժման տարիներին նրա քաղաքացիական շնչով ու ազգային հպարտութեամբ լեցուն յօդուածները, ուր նա պաշտպանում էր այն ծիլերը, որոնց մէջ հայ պետականութեան ծննդեան արմատ էր տեսնում, անուանում «Խօր խորհուրդ» եւ չէր սխալւում: «Տօնական օր էր կարծես, երբ կը քալէիք դէպի Մատենադարան: ...Աճապարանք չկար, հրմշտուք չկար, պոռչտուք չկար: ...Ես շարունակ կը մտածէի այն հարիւրհազարաւոր մարդոց մասին, որոնք կարծես մէկ մարմին դարձած, ամիսօս, կարգապահ, բարեկիրթ, կանգնած էին, եւ տակալին մը մինչեւ կէսգիշեր պիտի կանգնէին, իրենց ներկայութեամբ իսկ բան մը աւելցնելու համար միասնականութեան ...Խօր խորհուրդին վրայ»²: *Խմբագրի ու լրագրողի ամենատես աչքը Հայաստանում նկատում է արժէքների փոփոխութիւն դէպի ազգային ակունքները: Նա արձանագրում է գլխաւորը՝ Հայաստանում ազգային միասնութեան շահագրգռութեամբ են մօտենում համընդհանուր ճակատագրին:*

Հատտէճեան արձակագիրը գրական ասպարէզ իջաւ անակնկալ մուտքով 1946ին, երբ տակալին քանոնաւոր երիտասարդ էր. գրող Ամիրեանը, յետպատերազմեան թուրքական հանդէսում ընթերցում է անծանօթ հեղինակի «Բառասխալ» պատմուածքը, գնահատում, թարգմանում ու նոյն տարին տպագրում իր՝ մէկ տարուայ կեանք ունեցած *Անի* հանդէսի առաջին համարում: Այդ առթիւ Հատտէճեանը խոստովանում է. «Յստակ կերպով կը յիշեմ անակնկալ համդիպումս հայ գրականութեան հետ. ...Խաչիկ Ամիրեան մէկ պատմուածքս հայերէնի քարգմանեց ...Իր այդ շարժումով հայ գրականութիւնը ի՞նչ շահեցաւ, չեմ գիտեր, բայց գիտեմ թէ ես շահեցայ հայ գրականութիւնը»³:

Դեռեւս Միխիթարեան Վարժարանում ուսանելու տարիներին պատանի Ռուպէրը եւ համադասարանցի Գեղամ Սվաճեանը (յետագայում՝ Գեղամ

Սիւսան, 1926-1991) պարբերաթերթեր էին հրատարակում, ընտրում էին թատերախաղեր ու տալիս տնային ներկայացումներ: Այստեղից նաեւ՝ անդուլ հետաքրքրութիւնը թատրոնի նկատմամբ:

Դեռեւս երիտասարդական շրջանից Հատտէճեանը ծանօթացել էր համայնքում անուն հանած Վարուժան Աճէմեանի հետ, որը 50ականներին յայտնի էր հայկական կեանքից առնուած ինքուրոյն պատմութեանը ու թատերագութիւններով: Տարիներ անց խմբագիրը խոստովանում է. «...Եւրօ սրտիս մէջ ամխորտակելի սէր մը հաստատուեցաւ մեր գրականութեան նկատմամբ, ատոր մէջ մեծ էր ուրեմն տեղը Վարուժան Աճէմեանին»⁴: 1956ին Արգենտինա անցած եւ քառասուն տարիներ այնտեղ ապրած թատերագիրն ու պատմութեագիրը շարունակում էր պահպանել հմայք ու ազդեցութիւն Ստամբուլի «նորատարագ» երիտասարդների աչքում:

Պէտք է նկատել, որ աւագ սերնդի ներկայացուցիչների գրական-գեղագիտական ճաշակը չէր բաւարարում նորերին: «Նոր» բան չկար առանձնապէս «հին» բանաստեղծութեան կարգուսարքի մէջ: Դա էական չափով վերաբերում էր Գարուն Նաթանեանին (1891-1978), Համբարձում Զոհականին (1894-1962), Եղուարդ Սիմօնեանին (1906-1979), Մեքսիկա անցած Մկրտիչ Հաճեանին (1915-1985): Արձակում յարանման տեղապտոյտը չյաղթահարեցին Բազարատ Թեւեանը (1893-1967), Ատրինէ Տատրեանը (1915-2002), Արեգ Տիրազանը (Օննիկ Պասմանեան, 1902-1980) եւ ուրիշներ: Անդրադառնալով նրանց տիպարանական յատկանիշներին՝ յատկապէս վերջինիս առիթով, Հատտէճեանը գրում է. «Մենք երիտասարդական խանդով եւ դժուարահաճութեամբ, արդէն վերապահ էինք բազմաթիւ երեք գրողներու նկատմամբ: Արեգ Տիրազանին արուեստականօրէն բարձրաթիշ եւ այլաբանական ոճը չէր որ հաճոյք պիտի պատճառէր մեզի: Մեր ուզածը չէր այդ: ...Այդ երկուքը (վէպի նիւթը եւ ընտրուած բառամթերքը - Յ.Ե.) քով քովի գալով թերեւս ընտիր գրականութիւն մը կը ստեղծէին հին սերունդի չափանիշով, բայց ատիկա մեզի չէր խօսեր»⁵:

Ստամբուլահայ նորագոյն բանաստեղծութեան եւ արձակի դպրոցը շարունակում էր իր ընթացքը անցեալ դարի երկրորդ կէսին: Մարմարաօրութեթի չուրջը համախմբուած էր համայնքի սերուցքը, որոնց թւում՝ Արսէն Ժանեանը, Վարդեհեա Գարակէօզեանը (ծն. 1938), Անդան Էօզէրը (1927-1994), Օննիկ Ֆլորեանը (1931-1976), Իրմա Աճէմեանը (1936-1990), Արմէնուհի Թերզեանը (1910-1992), Յակոբ Խաչիկեանը (ծն. 1926), Հիւրա Գալֆայեանը (ծն. 1942):

Արձակ մուտք գործած երիտասարդների (Պիպէրեան, Էօզէր, Մկրտիչ Մարկոսեան (ծն. 1938) եւ բանաստեղծութեան մէջ հաստատուած նոր ուժերի (Զահրատ, Շիկահեր եւ Խրախունի) շնորհիւ ստամբուլահայ գրական դպրոցը ձեռք է բերում կենսունակութիւն, նիւթերի բազմազանութիւն: Իրականանում է Յակոբ Մեծուրու (1886-1978)՝ անհաւատալի թուացող կանխագուշակումը, թէ՛ «...նոր «փեմք»եր պիտի գային, դրօշակը պիտի առնէին իրենց ձեռքէն եւ պիտի շարունակէին դրօշաւը»⁶: «Դրօշաւը» դէմքերից էր, բնականաբար, Հատտէճեանը:

Ստամբուլահայ այս սերունդը գրականութիւն ներմուծեց ընկերային, համամարդկային հարցադրումներ, փիլիսոփայական խորութիւն ու գրական նիւթի համակարգում: Անդրադառնալով գրչեղբայրների ստեղծած գրական ժառանգութեան բովանդակային շերտերին՝ բանաստեղծ Ռախունին նշում է՝ իւրովի կրկնելով Յովհաննէս Թումանեանի (1869-1923)՝ Ալեքսանդր Շիրվանզադէի (1858-1935) առիթով ասուած հանրայայտ գնահատականը. «...Մինչդեռ ամէք Չաիրատի մէկ քերթումը, Ռուպեր Հատտէնանի մէկ պատմութեանը, թատերգութիւնը, վէպը կամ հրապարակագրական մէկ յօդումը, որ ամօքեայ ու տեղական բնոյթ չունենայ, թարգմանեցէք որեւէ լեզուի. անմիջապէս իր արժանի տեղը կը գտնէ օտար մասուլի կամ հրատարակչութեան մէջ»:

Միջավայրի առթած յայտնի «կոճկուածութիւն»-գապուածութիւնը նրանք վերածեցին գեղարուեստական գորութեան: Եւ դա ոչ միայն Հատտէնանի պարագայում: Որքան խորն է ազգային նիւթից «կտրուածութիւնը», այնքան բառի, պատկերի ենթախորքում հարցադրումը ստանում է ասելիքի նպատակային սլացք: Դա վերաճում է կայուն ոճաւորման եղանակի, քննական բարձր յատկանիշի:

1981ին Մարմարայի խմբագրական սիւնակները, որոնք յետոյ դարձան Յուշատետրի տասնեակ հատորների առաջը, Հատտէնանի գրական ներկայանակին հաղորդում են քաղաքացիական նկարագիր, բացայայտում ժամանակակցի առջեւ ծառացած մշակութային խնդիրները, ազգային պատմական աղբիւրները: Դրանք ապահովում էին շահեկան երկխօսութիւն հեղինակի ու համայնքի ընթերցողի միջեւ, պահում-պաշտպանում ստամբուլահայութեան ազգային դիմագծի աւանդական ուղղութիւնը նորագոյն շրջանում, այսինքն՝ ծառայում հայապահպանումի հիմնախնդրին: Յուշատետրի սկզբնաւորումից արդէն վեց տարի անց, 1987ին, գրող-հրապարակագիրը կատարում է հանգրուանային հետեւութիւններ. «Իմ ընթերցողներս գիտեն, որ մոյնիսկ երբ կը խօսիմ իմ ես-իս մասին, մոյնիսկ երբ «Յուշատետր» կը կոչեմ գրածս, իրականութեան մէջ կը խօսիմ անանուն մարդուն, ամբողջ մարդկութեան մասին, եւ «Յուշատետր»ը այս կերպով կը դառնայ բոլորին յուշատետրը: ...Ատոր փաստերէն մէկն ալ այն է, որ «Յուշատետր»ի էջերը կը հրատարակուին բոլոր գաղութներու մէջ, կարծես թէ իրենց համար գրուած ըլլային»⁸: Ինքնագնահատականը տրուած է իր ու Սփիւռքի, իր ու հայրենիքի համադրական պահանջների ճանաչողութեան ելագծով:

Նրա ճանաչողական խօսքը մատչելի է: Այդ պարզութիւնը թափանցել է եւ իր արձակ: Երկու դէպքում նրա աչքի առջեւ նոյնքան պարզ ընթերցողն է. «Պատահած է, որ կարգ մը շատ բծախնդիր ու արդիապաշտ գրողներ զիս մեղադրեն չափազանց «հասկնալի» ըլլալու, հասկնալիութիւնը փնտռած ըլլալու յանցանքով: Կը մերժեմ այդ ամբաստանութիւնը: Անհասկնալի ըլլալը դժուար չէ: Հասկնալիութիւնն է, դիւրաւ հաղորդ ըլլալն է որ դժուար է»⁹: Բայց նա չի իջեցնում գրական մտածողութեան իր բարձր

ձողը՝ աշխատելով պահպանել իր եւ ընթերցողի միջեւ «միջին յարաբերութեան» սահմանը:

Յուշատետրը շարունակական է: Այն միշտ զբաղեցնում է ընթերցասէր հասարակութեան սրտի ու մտքի բանալիները: Հեղինակը, անդրադառնալով «Գրական Հաւաքոյթ Սուատիյէի Մեր Պարտէզին Մէջ» ու «Օտարականներ Բնակարանիս Աշխատասենակին Մէջ» յօդուածաշարերին, ասում է. «Ես կ'ըսեմ որ Իսթանպուլահայ գրականութեան վեպն էր այդ: Ողբացեալ Գեղամ Սեւան կարօտի գրականութիւն կոչած էր սփիւքահայ գրականութեան մէկ հատումածը: Իսթանպուլահայ գրականութիւնն ալ իր տեղը ունէր կարօտի այդ գրականութեան մէջ: Եւ «Գրական հաւաքոյթ Սուատիյէի մեր պարտէզին մէջ» ու «Օտարականներ բնակարանիս աշխատասենակին մէջ» շարքերը քով քովի գալով կրնան դառնալ կարօտի գրականութեան նկատմամբ կարօտի նոր գրականութիւն մը»¹⁰:

Խօսքն առաջին հալեացքից ինքնագնահատականի տարր ունի: Սակայն ուշադիր, սուր աչքը կարող է բռնել նաեւ համայնքի գրական անցեալի մասին կարօտաբաղձ տրամադրութիւնը՝ «հին» կարօտի «նոր» արտայայտութիւնները:

Յուշատետրի սխնականերում մտաւորականի առօրեան է, նրա ապրումը, ազգայինի պահպանումի խորհուրդը, կեցութեան ամէնօրեայ հնչնուքը, խղճմասնքի, բարոյականութեան խնդիրները, եկեղեցու տօնակարգային ծէսին, էութեանը առնչուող հարցադումները:

Գրականութիւնը Հատտէճեանի տարբերքն է. նա գնահատում է, տալիս դիպուկ, առարկայական բնութագրումներ: Այսպէս, նկատելի է, որ նա հակուած է բանաստեղծութեան քնարականութեան ակունքներին (գնահատում է Յովհաննէս Շիրազի հայրենասիրութիւնը, Մարօ Մարգարեանի սիրային երգի զգացմունքայնութեան նոր դրսեւորումները: Նա քննում է նաեւ արուեստի ճանաչողութեան խնդիրները՝ գեղեցիկը, ողբերգականը, հոգու, ներաշխարհի լոյսերը: Մեզ գրաւում է Յուշատետրի ժանրային ենթակառուցուածքը՝ մարդուց մինչեւ համայնք, հայից մինչեւ համամարդկային արժէքներ, առօրեայի մանրութից մինչեւ ընդհանրական խորհրդածութիւններ: Ու այս ամէնի ճանաչողականի կենտրոնում մարդն է՝ ներքին մշակոյթի բացայայտման բազմաճիւղ թելերով, որոնք, իր արտայայտութեամբ՝ «կ'երկարին, կ'երթան», ինչպէս ժամանակին խորագրել է հատորներից մէկը:

Ժանրային կառուցուածքի ընդգրկունութեամբ նրա Յուշատետրը մօտենում է Ալեքսանդր Գրեգէնի (1812-1870) Եղեւութիւն Եւ Քոհներին, Միքայէլ Նալբանդեանի (1829-1866) Կոմս Էմանուէլի Յիշատակարանքին, Վազգէն Շուշանեանի (1903-1941) «Ներքին Դաշտանկար», «Պառնիխուռն», «Քրօնիկոն Քնարական» եռաշարքին, Մարիէտա Շահինեանի (1888-1982) Մարդը Եւ Ժամանակը պատումին:

Յուշատետրերում՝ մասնաւորապէս «Հազար Տարի Ս. Գրիգոր Նարեկացիի Հետ», «Յակօր Պարոնեան Վերադարձաւ», «Օտարականներ Աշխատասենակիս Մէջ», «Դանիէլ Վարուժանի, Սիպիլի, Իգնա Սարըսալանի

Բանաստեղծութիւնները», «Գրական Հաւաքողներ...»ի շարքերը, «Պտոյտ Մը Հայ Բանաստեղծութեան Պարտէզին Մէջ», «Հին Հասցէներ...», «Խաթանպուլահայ Նոր Բանաստեղծութեան Վէպը» փորձագրութիւններում գրական ըմբռնումի համահայկական չափանիշներն են, որոնք մի տեսակ ստուգութեան են ենթարկուած համաշխարհային հզօր անդրադարձումներին, չփոմաների ճանապարհով :

Լրագրողը գրուցում է ընթերցողների հետ ազգային պատմական, ընկերային մշակութային հիմնախնդիրների շուրջ: *Յուշատետրի էջերում ենք կարդում Մեսրոպ Մաշտոցին ուղղուած նոր ժամանակի խօսքը: Մեսրոպեան ինքնութեան տագնապը խորն է ապրում այսօր գրողը, քանի որ հայ գրերի շնորհիւ ժողովուրդն անցել է դարերի միջով, պահպանել ազգային ինքնութիւնը: Առաջին հերթին խորն է այդ տագնապը այսօր արեւմտահայութեան շրջանում, ուր մայրենին, ինչպէս ինքն է գրում, սրբուել է նորահաս սերնդի մէջ՝ «մայրական կաթի հետ միասին»:* Լեզուն արեւմտահայութեան մէջ նահանջում է, խիստ կրճատուել է հայկական դպրոցներում սովորող աշակերտութեան քանակը, ծնողները նախընտրում են զաւակներին տեղաւորել օտարալեզու դպրոցներում, հայերէնը գիջում է դիրքերը նաեւ խօսակցականում: Այսօր մեսրոպեան ինքնութեան պաշտպանութեան նոր շրջանն է. «...Լսէ՛, Մեսրոպ, քու գիրերով կը խօսիմ քեզի հետ եւ իմ ամբողջ ժողովուրդիս հետ: Իմ ժողովուրդիս թիւը փոքր է աւա՛ղ: ...Բայց քու գիրերդ ամենէն ապահով կամուրջներն են քու ցիրուցան սակաւաթիւ երկրպագուներուդ միջոյն: ...Գետի մը զուլայ ու անապակ ջուրերուն մման կը հոսիմ ու կ'երթան հայ մարդէն դէպի հայ մարդ՝ զովութիւն, թարմութիւն, կենսունակութիւն, մխիթարութիւն, ինքնապահպանում բաշխելով մէկէն դէպի միւսը...»¹¹:

Հատուէճեանի հարցադրումներում խմբագիրն ու արձակագիրը «յայն տեղ են յատկացնում» գրականագէտին, որը չի գիջում «նրանց» տարբեր գրողների բնագրերը «ըմբերցելու ատենին»:

Կարելի է յիշատակել *Յակոբ Պարոնեանի Մտերմութեան Մէջ* գնահատողական գիրքը, ուր տարրալուծուած են երգիծաբանի երկերի պատմաճանաչողական վերլուծութիւնը, նրա գեղարուեստական յատկանիշների դիպուկ բնութագրումները եւ նորագոյն ժամանակի հոգեբանութեան հետ պարոնեանական ականդրովի համահունչ «ներկայութիւնը»:

Այս ճանապարհով Հատուէճեանը փորձում է նորօրեայ ստամբուլահային «պոլսական» ընտանի ճանապարհով հենց Պարոնեանի «միջոցով» վերադարձնել դէպի գրական հին, բայց չկորսուած աւագան: Տարիներ անց, անդրադառնալով գրական մշակների ժառանգութեանը, Հատուէճեանը գրում է. «...Ես ամծնապէս գիտեմ որ գրականութիւն ընելը, ծովուն մէջ իրարու ետեւէ քար մետել կը մշանակէ: Այդ քարերէն ոմանք պիտի երթան ծովուն տակը, ոմանք ալ պիտի ծփան ջուրին մակերեսին վրայ: Ոմանք պիտի անհետանան ի սպառ, ոմանք ալ պիտի առնուին ջուրին մակերեսէն, դարձեալ ցամաք պիտի բերուին: Եթէ պիտի գրես, կանխաւ պիտի ընդունիս այս իրողութիւնը»¹²:

Տագնապն արդարացուած էր: Այն հակադրական ելազօծով լիեցնում է Կոստան Զարեանի (1885-1969) Նաւատումար գրքի այն նշանաւոր դարձած միտքը, որը ծնունդ էր ֆրանսասիրութեան, օտար լեզուի հանդէպ տեւական հմայքի. «Հայերն գրելը՝ ծով նետել է,- գրում էր նա:- Ուստի եթէ գրեմ, պիտի գրեմ ֆրանսերէն եւ կամ անգլերէն»¹³: Նոյն պատկերային համակարգից ծաւալուած ծովը Հատտէճեանի համար գրական-ստեղծագործական արդար կշռի ստուգիչ նախապայման է, եւ մտածողութեան հետեւողականութիւնը մեծացնում է գրողի հեռահար նպատակը:

Որն է տագնապը, որ համայնքում աստիճանաբար նօսրանում են գրողներին, հայերէն կարդացողներին շարքերը, իսկ նորերը ի յայտ չեն գալիս. «Այս հաշուետուութիւնը տխուր է թէ՛ ինձի, եւ թէ՛ Մնձուրիին համար: Գիտեմ որ Մնձուրի շատ կը տառապի երբ կը լսէ թէ գրողներս ինչպիսի փոքրամասնութեան մը մէջ մնացած ենք այլեւս, եւ թէ մեր մայրենին որքան նահանջած է ամէնուրեք, թէ ան լրիւ բացակայի սկսած է մեր դպրոցներէն...»¹⁴:

Լրագրող-գրող ներքին պայքարը, որն ապրում էր Հատտէճեանը, եւ գրական, եւ բացասական գործօններ է հաղորդել նրա ստեղծագործական շերտերին: Լրագրողը միշտ էլ «խանգարել է» արձակագրին նաեւ ժամանակի առումով, քանի որ այդ ընթացքին կարող էր արտադրել գեղարուեստական երկեր: Հրապարակագրութիւնը խլել է գրողից նիւթի գեղարուեստական բազմազանութիւնը, բայց եւ նպաստել է ոճի հարստացմանը, մտքի տարողունակ ու յստակ ձեւակերպումներին:

Կարելի է ցաւ ապրել, որ գրական արդասաւոր ճանապարհին նա այդպէս էլ չկարողացաւ վէպի տիրոջիմներում ամբողջական խօսք ասել՝ բաւարարուելով միայն Առաստաղի երկու հատորներով (Առաստաղ 1983, Առաստաղի Միւս Կողմը, 2000), մէկգլխի զննելով մտայնացումի նախնական ծաւալները, այդպէս էլ չհասցնելով գրել «Փլուզուող Առաստաղը»: Անդրադառնալով Հատտէճեանի վիպական երկի պարտադրուած ընդհատումներին՝ գրականագէտ Սուրէն Դանիէլեանը բնորոշում է մտաւորականի այս երկուութեան ներքին լարուածութիւնը այսպէս. «Լրագրողը համայնքի, ժողովրդի տրամադրութիւնների զգայաչափն է, մինչդեռ գրողի համար դա նախապայմանն չէ: Մենք մեզ իրատունք ենք վերապահում մոյմիսկ պատասխանելու Ռ. Հատտէճեանի ամունից՝ ինքը չի կարող ապրել առանց լրագրական, ասել է թէ՛ ժողովրդական կեանքի հաշուեկշռի: Աւելի քան հրամայական է կոչման եւ յանձնարարութեան խնդիրը»¹⁵: «Ցաւն ի հա՛րկէ, գրողի հետ է. լրագրողը միշտ «ստանձել է» արձակագրին, զսպել թուիքը: Ցաւը գալիս էր ճշմարտութեան այն ըմբռնումից, որ պատմութեան մէջ յարստեւողը գրողն է:

Ինչպէս նշել ենք, Հատտէճեանը գրականութիւն գալիս է փիլիսոփայական-հոգեբանական դարպասներից: Ծիշտ է, նախկինում էլ անհատի հոգեբանական բնութագրերը կենսական են եղել գրական աշխարհում: Նար-Դոսը աւանդույթներ է մշակել արեւելահայ գրականութեան մէջ հոգեաշ-

խորհի քննութեան կազմաւորման առումներով: Անմիջապէս կարելի է մտաբերել նաեւ Վազգէն Շուշանեանին, որի ստեղծագործութեամբ «գոյապաշտութեան նախադուռը» ազգային տարագ ստացաւ:

Շուշանեանական յուզական տարերքի դիմաց Հատտէճեանը հոգու բացայայտումը տանում է մարդու ներաշխարհի խաղաղ քննութեան հունով, անձնական եւ հաւաքական Ներքի համադրման եղանակով, ուր անցումները սահուն են, տրամաբանական: Նրան հաճեցորդէն առանձնացնում է ընդգրկուն հրապարակագրութիւնը, աշխարհաճանաչողութեան հակուածութեան բնական, անկաշկանդ ճանապարհ: Աւելին գիտի քան ընթերցողը, բայց երբեք քարոզչական, ուսուցողական չի դարձնում իր ոճը, ընդհակառակը, հաւաքական «գրուցակիցը» հաւասարութեան զուգակցութիւն է տեսնում իր ու Նեղինակի միջեւ, ներգրաւուած է որպէս աշխոյժ կողմ:

Հատտէճեանի համար գրողը առարկայական պայմանականութեան գերին չէ: Ինքն այն կարծիքն ունի, որ արդէն ձեւաւորուած գրողը պիտի ունենայ իր ուրոյն ոճը, որն իրենն է ու չի ընդունում որեւէ գրական դպրոցից կամ «*վարդապետութիւն*»ից կախուածութիւնը: Հատտէճեանի կարծիքով գրողն ու արուեստագէտը ազատ են իրենց ստեղծագործութիւններում, սակայն շատ կարեւոր է դիտում, որ նորերը հետեւեն գրական տարբեր շարժումների եւ ուղղութիւնների (առարկայական խորհրդապատկերներ, բառերի հեռագնայ, այլաբանական իմաստների ամրագրում բնագրերում, սիմվոլիզմի եւ տպաւորապաշտութեան նոր զուգակցումներ եւն): Սակայն «ճամբայ կտրած» գրողն իրաւունք չունի իրեն սահմանափակելու: «Կ'արժէ յատկապէս երիտասարդական շրջանին հպատակեցնենք մեր արուեստը որոշ դպրոցներու եւ ճաշակներու, քանի որ այդ ատենին հաւատարիմ կը թուինք վարդապետական հրամայականներուն, մինչդեռ, քանի կը հասունցանք, քանի տարիք կ'առնենք, մենք մեզի պիտի թոյլ տանք վարդապետութեան դուռը քանալու եւ ուրիշ պարտեզներու մէջ ալ պտտելու: Ես այսպէս կը հասկնամ Գրականութիւնը գրականութիւն է, ո՞ր վարդապետութեան, ո՞ր սկզբունքի ալ հետեւիլ ուզէ»¹⁰:

Ստեղծագործական հարուստ փորձով նա պարզել է, որ գեղարուեստական կառոյցում կենսականը մշակուող նիւթն է, իսկ հոգեբանական հանգոյցներում՝ մարդու ճանաչումի ընթացքները, ներաշխարհի բերած անակնկալները: Կարելի է անվարան ասել, որ Հատտէճեանը ազգային տարագ «հագրեց» գոյապաշտական սկզբունքներին՝ դառնալով հայ գրականութեան մէջ այդ դպրոցի անվերապահ առաջնորդը:

Հատտէճեանի ստուարածաւալ գրականութեան մէջ ողջ սերնդի կենսագրութիւն կայ, Սփիւռքում ազգային, ազգային դիմագծի եւ արժէքների պաշտպանութեան գերիսնդիր, ինչը անհրաժեշտ է ճանաչել եւ ընդունել գրողի աշխարհայեացքում:

*

Ուշագրաւ են Հատտէճեանի խորհրդածութիւնները մշակույթի, գիր ու գրականութեան մշակների մասին: Հայ գրականութեան ներկան, ըստ նրա,

մտահոգիչ է: Գրական հեռանկարի շուրջ պոլսահայ գրեթե ամբողջ Ա-միրեանի, Աճեմեանի, Մնձուրու, Խրախունու, Ջահրատի, Պիպեռեանի, Կոմիլեանի, Մարկոսեանի եւ այլոց բանավեճերը բխում էին ազգային մշակույթի շարունակականության շահից: Հատուկ հեշտանքն այսօր էլ յիշում է իր եւ Պիպեռեանի արդիւնաւոր երկխօսութիւնը գրական զարգացումների շուրջ, գրեթե ամբողջ հեղինակաւ հարցումները՝ «Գեո կը շարունակե՞ս: Գեո չիսկսեցա՞ր որ անիմատ աշխատանք է»¹⁷: Այսպէս ասում էր նա, ով խորքով մշակել էր սոցիալ-հոգեբանական վէպը՝ շարադրելով *Լիւրաժը* (1959), *Մրջիւններու վերջալոյսը* (1984) վէպերը:

Գիր պահելը ժողովուրդ ու մշակույթ պաշտպանելու արժէք է եղել Հատուկ հեշտանքի համար. «Անցեալի հայ գրականութիւնը ատենօք թանգարան մըն էր, - գրում է նա՝ ընդհանրացնելով յուսահատ թուացող մտորումները *Թուշատեարում*, - հիմա սկսած է դառնալ գերեզմանատուն մը: Երկաթեայ ամուր դռներով գերեզմանատուն մը, որ շատ այցելուներ չունի: Հազիւ թէ երկու կամ երեք օրը անգամ մը այցելու մը կուգայ ու կը զարմէ դուրսը: ...Բայց շարունակ իր շուրջը կը մայի, որպէսզի տեսնէ թէ ուրիշներ ալ չե՞ն գար այցելել սա հողաշէտը, որ լեցուն է հրաշալի յուշարձաններով: Չեն գար: Ան այդ օրուան առաջին ու վերջին այցելուն է: ...Այդ շուրքուն այցելուներէն մէկը ես եմ»¹⁸: Գրականութեան աւանդույթի նահանջի մասին է տխուր խօսքը:

Թուշատեարի գիտական ենթահողով բազմաթիւ հատորներ կազմած փորձագրութիւններում նուիրական էջեր կան Հայ գրական անցեալ ու նոր զարգացումներին, արեւելահայ եւ արեւմտահայ գրագէտներին:

Հատուկ հեշտանքը սատարում է գրական անդաստան մուտք գործող երիտասարդ գրողներին ու բանաստեղծներին, ինչի արդիւնքում յաճախ ինքն է դառնում թիրախ գրաքննադատների համար: Գնահատում է այն գրողների փառքերը, որոնք հետեւում են եւրոպական գրական դպրոցների ընթացքներին: Նրան հետաքրքրում է գոյապաշտական իմացական ակունքը, իրեն տեսնում է Ժան-Պոլ Սարտրի (1905-1980), Սիմոն դը Բովուարի (1908-1986) եւ ֆրանսիական իմացական շարժման ներկայացուցիչների շարքում: Նիւթը նրան գրաւում է առաջին հերթին ստեղծագործական հիւսուածքի գորութեամբ. «Գրողները կը մահանան, քայց անոնց գործերը կը մնան: Գրողի մը մեծագոյն մխիթարանքն է այս: Ո՛չ մէկ գրող կրնար գրող դառնալ եթէ չգիտնար որ իր գործը պիտի մնայ յայտորդ սերունդներուն: Ո՛չ մէկ գրող կրնար զոյլ-գործոցներ արտադրել, եթէ վստահ չըլլար որ գրականութեան պատմութիւնը իր էջերուն մէջ պիտի արձանագրէր անոր անունը»¹⁹: Խօսքը գրողին հետապնդող փառքը չէ, այլ գրութեան արժեւորման նախապայմանը:

Հեղինակը բարձր է գնահատում աւագների ժառանգութիւնը Վարուժանի (1884-1915) անդրադառնալիս արձակագիրը դիպուկ է բնորոշում նրա գրական ամենի թուիչը. «Հեթանոս երգերու սիրահար մեր բանաստեղծը, որ երիտասարդական օրերու իր խոյանքին մէջ հուժկու ցուլ մը

մատաղ ըրած էր Վահագնին, իր պապերուն աստծոյն, ցուլը կը նկատէր մարդուն ու ցեղին հօգորութեան խորհրդանիշը: ...Եւ տակաւին կ'աղօթէ ան որ իր կտրին որդւոյն տաւալ մատնե՛րովը ցանձաւ սերնցուն աստղերու քիւլին չափ հունձք տայ իրեն եւ մեր ժողովուրդին»²⁰:

Փոխուէ՛ր են այսօր ժամանակները, - թախծում է հրապարակագիրը:

Հատուէ՛նեանի արդար գնահատութեամբ՝ ձեւաւորուած պոլսաճայ նորագոյն բանաստեղծական դպրոցի ակունքներում կանգնած Կարայիս Ճանճիկեանն (1920-1946) ու Հայկազուն Գալուստեանը (1920-1985) գրական կենտրոն բերեցին սոցիալական հիմնախնդիրները, «չոր», ոչ-բանաստեղծական զգացողութիւնը: Նրանք, ազդուելով Օրհան Վելիի (1914-1950), Օթթայ Ռըֆաթի (1914-1988) պատկերաւորման համակարգի գինանոցից, ծառացան դասական բանաստեղծութեան դասական պատկերային հարուստ փորձի դէմ: «Եւ որպէսզի շառաչուն կերպով փաստուէր թէ նոր բանաստեղծութիւնը իր կապը կը խզէր հիմին հետ... եւ կը հռչակէր նոր բանաստեղծութեան բացարձակ ազատութիւնը: Այս նոր ուղիին վրայ լեզուական գեղեցկութիւնն ու քերականական օրէնքներն անգամ կրնային ոտնակոխ ըլլալ յանուն ազատութեան ու իրապաշտութեան»²¹: Յետագայ տարիներին զօրացան Ճանճիկեանի հետեւորդները, որոնց թւում՝ Ա. Շաւարշը (Արամ Փեհլւանեան, 1917-1979), Ամիրեանը, Ս. Ք. Չանգուն (1917-2004), սակայն երկար չտեւեց այս դպրոցի ազդեցութիւնը: Սոցիալական նիւթերի գերիշխանութիւնը այս վերջիններից շատերին (արձակու՝ Գեղամ Սեւան, որոշ, չափով նաեւ Պիպէտեան) կարճ ճանապարհով կապեց «ձախակողմեան» ընկալումներին: Նրանց զգալի մասը հեռացաւ Ստամբուլից: Հետաքրքիր է, որ Հայաստան ներգաղթած Գալուստեանը, էդ. Աղամեանը (1923-1991), Ճանեանը, անգամ Անիւի ու Ճառագալթի խմբագիր, ըմբոստ բանաստեղծ Ամիրեանը դադարեցին ստեղծագործելուց: Պատճառը թերեւս միջավայրի անուցիչ աղբիւրից եւ արեւմտահայերէնից կտրուկ հեռացումն էր: Հայրենիքի գրական միջնորդը, ինչպէս ցաւով նկատում է Հատուէ՛նեանը, այլ հետաքրքրութիւնների մէջ էր, որոնց քայլ պահէ նրանցից ոչ մէկին չյաջողուեց: Բացառութիւնը Գ. Սեւանի ստեղծագործութիւնն էր՝ ընդգծուած համայնավարական գաղափարաբանութեամբ:

Նորագոյն բանաստեղծական դպրոցի նուաճումը եղաւ խրախուճու հիմնած «աւարկայական խորհրդապաշտութիւն» գրական շարժման ուրուագիծը՝ հիմնականում բերդատնեան ընկալումների չափումներով: Սակայն նկատելի է, որ Հատուէ՛նեանը այնքան էլ խանդավառուած չէ նորայայտ շարժման արամաբանութեամբ, թէ եւ ինքն էլ գրականութիւն է եկել փիլիսոփայական ճանապարհով: Անդրադառնալով խրախուճու երգերի որակներին՝ մատնանշում է. «Ինք շատ կը սիրէ իր քերթողական արուեստը որոշ դպրոցի մը կապելը եւ այն տպաւորութիւնը թողով, թէ կը ստեղծագործէ վարդապետական սահմանափակ շրջանակներու մէջ: Թող ներք ինծի, քայց ես չեմ կարծեր, որ գրողները, մասնաւորապէս բանաստեղծները, հաւատարիմ կը մնան վարդապետական սկզբունքներուն, ո-

րովհետեւ շատ յաճախ անոնցմէ լաւագոյնները ...կը գործն վարդապետական կարգապահութիւնը եւ դուրս կ'ելլեն»²² :

Սկսած 1950ականներէից՝ համայնքում բազմապիսի բանաստեղծական նուաճումներ եղան, սակայն արձակում, ուր միջավայրը, կերպարները, դիպախադը պահանջում են իրական շփումների ենթահող, քնազծերը ցայտուն չէին: Արդեօք դրանից չէ, որ հոգեբանական քննութեան խորքը այդքան զգալի տեղ է գրաւում արձակում, իսկ Հատտէճեանի պատմութեանը վերածել է գրական առանձնաշատկութեան:

Հեղինակն անդրադառնում է պոլսահայ բանաստեղծութեան եւ արձակի զարգացման օրինաչափութիւններին: Արձակագիրը դա բացատրում է անակնկալ մեկնութեամբ՝ «ստեղական» արձակին պակասում է փիլիսոփայական խորքային ատաղձը. «Հայ գրականութիւնը որքան բախտաւոր եղած է բանաստեղծութեան կալուածէն ներս, մինչդեռ այնքան բախտաւոր չէ եղած փիլիսոփայութեան գետնին վրայ: Բանաստեղծներ շատ ունեցած ենք, եւ թէ ինչ տաղանդաւոր բանաստեղծներ: Բայց մատի վրայ կը համրուին փիլիսոփաները: Ինչո՞ւ արդեօք: Այս հարցումին պատասխանը դարձեալ ինքն է որ տուեր է՝ Եդիսան.

- Որովհետեւ փիլիսոփայութիւնը լեղի ու դառնահամ է»²³ :

Յիրաւի, հայ գրական անդաստանում առհասարակ թոյլ է եղել փիլիսոփայական խորքը: Գրական դաշտի այդ բացը արձակի ոլորտում լրացնում է Հատտէճեանի իմաստասիրական, գոյապաշտական խորքը, որը բխում էր եւրոպական ակունքներից:

Ստամբուլահայ արձակագրի գրական ժառանգութեան մէջ մեծ տեղ է գրաւում նաեւ անդրադարձը արեւելահայ գրողներին (Յովհաննէս Թումանեան, Աւետիք Իսահակեան, Վահան Տէրեան, Եղիշէ Չարենց, Ակսէլ Բակունց, Սիրվա Կապուտիկեան, Համօ Սահեան եւ շատ ուրիշներ):

Արձակագիրն անդրադառնում է արեւելահայ գրողներին, վերաթեւորում նրանց ստեղծագործութիւնները, իմաստասիրն համեմատութեան եզրեր կազմելով նոյն շրջանի արեւելահայ ու արեւմտահայ գրողների միջեւ: Նա ցաւով է անդրադառնում, որ գրողներն իրար քիչ են կարդում, կայ վերացական, թոյլ ճանաչում:

Այս առումով հետաքրքրութիւն է ներկայացնում Պետրոս Դուրեան - Վահան Տէրեան գրապատմական միջավայրերի համեմատութիւնը: Հատտէճեանը նկատում է, որ Տէրեանը ծնուել է Դուրեանի մահից տասներեք տարի անց ու արեւելահայ բանաստեղծութեան մէջ ներաշխարհի հոգեբանական քննութեանը զուգընթաց բացել սիրոյ պատկերային համակարգի աննախընթաց անմիջականութիւնը: Բայց արեւմտահայ բանաստեղծութեան մէջ առաջին քայլերը Դուրեանին էին, ինչը տարիներ անց վերահաստատուել էր Պարոյր Սեւակը (1924-1971)՝ կոչելով նրան «հայ նոր գրականութեան Վահագն»²⁴ : Զուգահեռ կարծես այնքան էլ չի ծաւալում գրական ուղղութեան հայեացքի ոլորտներում: Հատտէճեանը ժամանակ չի գտնում մօտենալու երկու քնարերգայնների ստեղծագործական ներքին շերտերին: Մինչդեռ, կարծում ենք, որ համադրական աշխատանքի պարագային, ար-

տաքին կեղեկաց անցնելով ոճային ճանաչողութեան, իմաստների արտայայտման եղանակներին, կը ճշդուէր նաեւ Տէրեանի գրական «յապաղած եղբայրը» արեւմտահայ նորագոյն բանաստեղծութեան մէջ, որը Վահան Թէքէեանն (1878-1945) է: Ինչ վերաբերում են Դուրեան-Տէրեան քննական շերտերին, Հատտէճեանը առաջին զուգահեռ տեսնում է հեռացումի, մեկուսացումի ձգտումի մէջ, որն անհատի ներքին դրամայից էր բխում, հասարակութեան հետ «բանաստեղծական բախումի» յայտնի բանաձեւերից: Նմանութիւններ կողքին առանձնութեան երգը բերում էր նաեւ իւրովի «ջրբաժան»: Դուրեանի համար Հատտէճեանն առանձնացնում էր սիրոյ մէջ բախումի հետեւանքները, իսկ Տէրեանի համար յայտարարում՝ «Հոս Պետրոս Դուրեան միայն բանաստեղծ էր, մինչդեռ հոն Վահան Տէրեան էր մաւտ քաղաքական գործիչ, . . . հաւատաւոր քարոզիչ»²⁵:

Ներկայացնելով Չարենցի կեանքն ու ստեղծագործութիւնը՝ Հատտէճեանը անդրադառնում է գրողի վարպետութեան հարցերին: «Ես իմ Անդռ Հայաստանի» բանաստեղծութիւնը նրա արդար կարծիքով, «ղարձած է հայկական ինքնութեան անցագիր մը» աշխարհասփիւռ հայութեան համար, ուր Հայաստանը նրա լինելութեան խորհուրդն է: «Այս իրաշալի բանաստեղծութիւնը, որ չարենցեան քարոյ, յեղափոխական, կոնցրետ, քաղաքական կամ գաղափարախօսական պայքարներու արիւնով թրջուած կարմիր բանաստեղծութեան մէջէն յանկարծ կը բացուի սիրուն ու բոլորը հմայող ծաղիկի մը մման, այնքան պիտի սիրուէր ժողովուրդին կողմէ, որ ապագային, Չարենցի դէմ անողոք պայքարներ հռչակող Հայաստանցի համայնավար գրագետներ ու քաղաքագետներ, . . . պահ մը իրենց գլուխը պիտի հակէին Չարենցի տաղանդին առջեւ, անկէ վերջ է որ իրենց բերանը պիտի բանային Չարենցի դէմ առաջ քաշելու համար ամենէն ծանր ու դատապարտիչ մեղադրանքները»²⁶: Չարենցի մէջ խոհակալում է աշխարհի էպիքական ճանաչման սկզբունքը: «Չարենց շուտով իր արուեստին մէջէն վանեց քնարականութիւնը եւ քնարին տեղ սկսաւ գործածել աղեղ ու նետ: Իր բանաստեղծական խօսքը այլեւս նետի մման պիտի արձակուէր ժողովուրդին ու ազգին թշնամիներուն դէմ»²⁷: Սփիւռքահայ ընթերցողին ուղղուած յօդուածներում հեղինակը փորձում է ուշադրութիւնը սեւեռել դէպի գեղարուեստական ճշմարտութեան նորագոյն խորհուրդները՝ կապուած ազգային բնագոյնների հետ, յիշեցնելով, օրինակ, չարենցեան «Պատգամ» բանաստեղծութեան գաղափարը:

Ուշադրութիւն է գրաւում Գուրգէն Մահարու (1903-1969) գրական ճակատագրի քննութիւնը, որն անցաւ խորհրդային աքսորի միջով, դիմակայեց ու վերադարձաւ, սակայն Հատտէճեանի արդար տպաւորութեամբ՝ հայրենիքում անցկացրած տարիները եղան աւելի դաժան: Հենց Հայաստանում պիտի քարկոծուէր Մահարի արձակագիրը, որը նոյնիսկ աքսորի տարիներին իր մէջ վառ էր պահել ծննդավայրի մասին գրելու փափաքը, հրապարակ հանեց Այրուող Այգեհատաններ (1963) հրաշալի վէպը, ինչի արդիւնքում, իր իսկ բառով, «խաշուեց» սեփական ժողովրդի ձեռքով²⁸: Հրապարակագիրն անդրադառնում է գրողի ու նրա վէպի ներքին աղերսներից

բխած բախումներին: Նրան հիացնում է Մահարու վստահութիւնը ապագայում իր գրչի արդար ընկալման խնդրում: Նրա «...հայրենասիրութիւնը աւելի տոկոսն ու մնայուն էր, նաեւ աւելի իրական, ինչպէս պիտի պարզուէր, երբ միւս կեղծ հայրենասէրները կամ խաբուած հայրենասէրները պիտի սրբութիւն պատմութեան բեմէն եւ հայոց երկրէն ներս պիտի բացուէր նոր հորիզոն, նոր կեանք, նոր վերածնունդ: Գուրգէն Մահարի միշտ հաւատացած էր որ այդ օրը պիտի գայ»²⁹:

Հատուէճեանը ցաւով է նկատում, որ Մահարին չտեսաւ գրական ճշմարիտ երազանքի մօտքը, սակայն, անդրադառնալով հայ ժողովրդի՝ դարերից եկող հիմնախնդիրներին, այն կապում է նոր աքսորի դրսեւորումներին. «Հայաստան արթնցած է երկար քունէ մը: Որքան լաւ է երբ ժողովուրդին երազը իրականութիւն կը դառնայ: Այսօր, որ Մահարին չտեսաւ այս պահը:... Բայց կ'արժէ որ հարց տանք. «Այրուող Այգեստաններ»ու հեղինակը հիմա ի՞նչ պիտի գրէր եթէ գլուխը վերցնէր ու քուղթ մատիտ առնէր վերստին: Դէպի Սիպերիա գացող շոգեկառքեր չկային: Բայց կային սաւառնակներ որոնք կ'երթային դէպի Ամերիկա, Եւրոպա ու Թուրքիա»³⁰:

Իր մանկութիւնը «քոյրերու, աղօթքներու, երգերու ու օրհնութեան մէջ» անցկացրած Եղիա Տէմիրճիպաշեանը (1851-1908) դիմում է Աստուծո՛ւ՝ խնդրելով կատարեալ դարձնել աշխարհը, քանի որ՝ «Ո՛վ իմ Աստուածս, արարչութիւնդ ալ հիմցաւ»³¹: Մինչդեռ արեւելահայ գրչեղբայր Համօ Սահեանը շատ աւելի ուշ ապաւինում էր Աստուծոյ արարչագործութեանը: Հետաքրքիր է, որ երբ անգամ Սահեանը փառաբանում էր աշխարհիկ կարգուսարքը, ըստ Հատուէճեանի համոզումի, ապրում էր Աստուծոյ ներշնչանքով. «Աղօթելու սովորութիւն չունէր, կամ արտօսումս չէր իրապարակաւ աղօթելու, չէր կրնար բերան առնել Աստուծոյ անունը, որովհետեւ ան կ'ապրէր 1954 թուականի համայնավար Հայաստանին մէջ: Ուստի «Աստուած» բառին տեղ գործածեց «աշխարհ» բառը»³²: Պայմանականութիւնը մերձեցնում է երկու բանաստեղծներին, որոնք ապրում էին տարբեր ժամանակներում, տարբեր գրական միջավայրերում: Երկուսին, շարունակում է սփիւռքահայ խմբագիրը, միաւորում է նաեւ կեանքի նկատմամբ փիլիսոփայական նուրբ, տեսանելի հայեացքը, ինչը եզակի օրինակ է ազգային գրական խաչուղիներում, ինչը գալիս է իմացական խորքից:

Կարելի է վստահաբար հաստատել, որ Թուշատեարի հատորները սփիւռքահայութեան համար իւրատեսակ «գրական համայնագիտարան» են, որոնց էջերում ընթերցողը կարող է միասնութեան մէջ նորովի ճանաչել հայ գրողներին: Գրողը փիլիսոփայական քննական ուղի էր բացում հայ գրական դէմքերի նոր ընկալման համար:

Հատուէճեան քննադատու տեսանող է ազգային գոյութեան բարդոյթներում: Նա դուրս է գալիս նախ սահմաններից՝ աննկատ լուծուելով ընկերային եւ մշակութային տարածութեան սահմաններում:

- ¹ Ռուպէր Հատտէճեան, *Օրացրիս Տասերչինգ էջերը*, Իսթանպուլ, 1977, Մուրատ Օֆսէթ, էջ 253-254:
- ² Ռուպէր Հատտէճեան, *Երեւանեան Յուշատետր-1989*, Իսթանպուլ, 1999, Մուրատ Օֆսէթ, էջ 24-28:
- ³ Նոր Սան, *Երիտմեայ Գրական Հանգէս Միջիջարեան Սանուց Միութեան*, Իսթանպուլ, ԺԴ. չրջան, 1968, թիւ 1-2 (111-112), էջ 39-40:
- ⁴ Ռուպէր Հատտէճեան, *Գրական Հաւաքոյթ Սուատիչի Մեր Պարաէջին Մէջ*, Իսթանպուլ, Մուրատ Օֆսէթ, 1999, էջ 19:
- ⁵ Նոյն, էջ 24-25:
- ⁶ Նոր Սան, Իսթանպուլ, 24 Ապրիլ, 2000, էջ 37:
- ⁷ Արթո Ճիւմպիւշեան-Զարեհ Խրախունի, *Անդրադարձումներ*, Իսթանպուլ, 2004, Մուրատ Օֆսէթ, էջ 41:
- ⁸ Ռուպէր Հատտէճեան *Գրական Գործունէութեան 40 Ամեայ Հանգրուանին*, Իսթանպուլ, Մուրատ Օֆսէթ, 1987, էջ 45:
- ⁹ Ռուպէր Հատտէճեան *Գրական Գործունէութեան*, էջ 45:
- ¹⁰ Ռուպէր Հատտէճեան, *Գրական Հաւաքոյթ Սուատիչի*, էջ 236:
- ¹¹ Ռուպէր Հատտէճեան, *Յուշատետր (Հետրանի)*, Ս. էջմիածին, Մալ Աթոռ Սուրբ էջմիածնի Տպարան, 1998, էջ 285-286:
- ¹² Նոյն, էջ 30-31:
- ¹³ Կոստան Զարեան, *Նաւատումար*, Երեւան, Սարգիս Խաչեան, 1999, էջ 506:
- ¹⁴ Ռուպէր Հատտէճեան, *Օտարականներ Աշխատասենեակիս Մէջ*, Իսթանպուլ, Մուրատ Օֆսէթ, 2002, էջ 28:
- ¹⁵ Ռուբէն Դանիէլեան, *Ռուպէր Հատտէճեան. Ներաշխարհի Գեղարուեստական Քննութիւն*, Իսթանպուլ, Մուրատ Օֆսէթ, 1996, էջ 40:
- ¹⁶ Ս. Դանիէլեան, «Կլոր Սեղան Պոլսի «Մարմարա» Թերթի Խմբագրատանը», *Նոր Գրական-Գեղարուեստական Հասարակական-Քաղաքական Հանգէս*, Երեւան, 1990, թիւ 5, էջ 123-124:
- ¹⁷ Ռուպէր Հատտէճեան, *Օտարականներ*, էջ 188:
- ¹⁸ Ռուպէր Հատտէճեան, *Պտոյտ Հայ Գրականութեան Քույրներուն Մէջ*, *Հոր- Ա.*, Իսթանպուլ, Մուրատ Օֆսէթ, 2008, էջ 8-9:
- ¹⁹ Նոյն, էջ 8:
- ²⁰ Ռուպէր Հատտէճեան, *Առաջատար Դէպի Բանաստեղծութիւն*, Իսթանպուլ, Մարմարա-Մուրատ Օֆսէթ, 2006, էջ 16-17:
- ²¹ Ռուպէր Հատտէճեան, *Իսթանպուլյա՛յ Նոր Բանաստեղծութեան Վէպը*, Իսթանպուլ, Մուրատ Օֆսէթ, 2004, էջ 9:
- ²² Դանիէլեան, «Կլոր Սեղան Պոլսի», էջ 123:
- ²³ Հատտէճեան, *Պտոյտ, Հոր. Ա.*, էջ 30:
- ²⁴ Պարոյր Սեւակ, *Երկերի Ժողովածու 6 Հատորով, Հատոր 5*, Երեւան, «Հայաստան», 1974, էջ 156:
- ²⁵ Ռուպէր Հատտէճեան, *Պտոյտ Հայ Գրականութեան Քույրներուն Մէջ*, *Հոր. Դ.*, Իսթանպուլ, Մուրատ Օֆսէթ, 2008, էջ 201:
- ²⁶ Ռուպէր Հատտէճեան, *Պտոյտ Հայ Գրականութեան Քույրներուն Մէջ*, *Հոր. Գ.*, Իսթանպուլ, Մուրատ Օֆսէթ, 2008, էջ 29-31:
- ²⁷ Նոյն, էջ 21:
- ²⁸ «Աղդարեւ»- գրում է Հատտէճեանը,- Մահարի այն գրագետներն է, որոնք խաչունեան ոչ թէ օտարութեան մէջ, այլ իրենց հայրենիքին հողերուն վրայ, իրենց ժո-

ղովորդին իսկ ձեռքով» (Հատտէճեան, Պտոյտ Հայ Գրականութեան Քույրներուն Մէջ, Հար. Բ., Իսթանպուլ, Մուրատ Օֆսէթ, 2008, էջ 295):

²⁹ Նոյն:

³⁰ Նոյն, էջ 296-297:

³¹ Եղիա Տէմիրճիպաշեան, Երկեր, Երևան, «Սովետական Գրող», 1986, էջ 75:

³² Ռուպէր Հատտէճեան, Պտոյտ Մը Հայ Բանաստեղծութեան Պարտէզին Մէջ, Իսթանպուլ, Մուրատ Օֆսէթ, 2000, էջ 116:

THE EXAMINATION OF CERTAIN ISSUES OF THE ARMENIAN LITERATURE IN ROBERT HADDEDJIAN'S *HUSHADEDR* SERIES

(Summary)

HOVHANNES YEGHOYAN

The *Hushadedr* book series occupies an important space in the literary production of Istanbul-based author, Robert Haddadjian. The books are unusual encyclopedias for the Diaspora readership and examine various issues of Armenian literature.

The paper argues that Haddadjian is a philosopher-author, an observer of Armenian literature, which values the letter as a strong defense mechanism for a nation and its culture.

In the *Hushadedr* series one can come across deep reflections on past and current Armenian literary developments as well as on Eastern and Western Armenian authors. The series brings into the limelight the devotees of Armenian writing from Mesrob Mashdots up to the current era.

The paper notes that Haddadjian is singled out as an intellectual and a thinking journalist. His literary vision has a strong inherent unity that enables him to rechannel the two sources of intellect and public writing into a single track. The paper argues that this track brings literary knowledge closer to the vital perceptions of the community and nation and helps in the search for national roots.

Furthermore, by presenting Eastern and Western Armenian authors in one unified space, by comparing and pooling their literary productions, Haddadjian tries to bring closer the two 'alienated brothers' of Armenian literature.

Yeghoyan considers this a great service to Armenian literature.

